

Հայ գրականության մարզային օլիմպիադա
2019-2020 ուստարի
(տևողությունը՝ 120 րոպե)
12-րդ դասարան

1. Ո՞վ է Ծմակուտի քուրմը: Ո՞ր գրողների գրական ժառանգության կրողն է նա:
Մեկնաբանի՞ր գրողի հետևյալ ցանկությունը. «Ուզում եմ մի նոր հովիտ փռել և բնակեցնել նոր
մարդկանցով ու կենդանիներով և կարծես թե հաջողում եմ: Շատ կուզենայի, որ իմ հովիտը
մեծ ու արևոտ լիներ, որ նրա բնակիչները միայն լավ մարդիկ լինեին և վատերի համար իմ
հովտում տեղ չլիներ...»: Հաջողվե՞լ է գրողին իրականացնել իր ցանկությունը (ներկայացրու՝
հերոսների բնութագրմամբ):

5 միավոր

2. Վարդգես Պետրոսյանը նոր ժամանակների վավերագիր: «Վերջին ուսուցիչը» վիպակի քո
նախընտրած հերոսը: Քո կարծիքով այսօր կա՞ն Վահան Մամյաններ:
Որտե՞ղ էին սխալվել մյուս ուսուցիչները:

5 միավոր

3. Նաիրի Զարյանի «Ասք Անդրանիկ գորավարի» երկը: Ինչո՞ւ է զոջում բանաստեղծը:
Ընդունո՞ւմ ես բանաստեղծի զոջումը: Պատասխանի՞ր բանաստեղծին գորավարի անունից:

5 միավոր

4. Ովքե՞ր են օտարագիր հայ գրողները: Գրի՞ր որևէ գրողի որևէ գործի մասին:

Հուշում: Վիլյամ Սարոյան, Անրի Վերնոյ, Լևոն-Զավեն Սյուրմեյան, Մայքլ Առլեն, Մայքլ
Առլեն Կրտսեր, Շառլ Ազնավուր և այլք:

5 միավոր

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի
նախագահ՝ Ս. Աբազյան